

րինհրու իր պտոյաներու ընթացքին խղճմտօրէն կը դիտէ, կ'ուսումնասիրէ այդ ցեղի տըխուր վիճակն ստեղծող, պայմանաւորող բոլոր չարաչուք ազդակները եւ ամենէն առաջ, հըմուտ վիրահատի մը անվրէպ ձեռքով, մատը կը դնէ հիմնական վէրքին վրայ, — հայ ժողովրդի միտքն ու հոգին խեղաթիւբող, անոր գոյութեան հիմքերը խարխուղ չարիքին — տնտեսական չարիքի վրայ:

Նա գիտէ իր ծանր առաքելութեան բոլոր ուսկն ու պատասխանատուութիւնը, գիտէ «Սուրբ Գործի» առջեւ ցցուած բոլոր անարկու խոչընդոտներ, չ'ուզէր մոլորեցնել իր հազարաւոր ընթերցողները ցնորական պատմութիւններով, կ'ուզէ պարզ երեսով, մաքուր խղճով ներկայանալ հայոց պատմութեան դաւոյ հայկական սերունդներու ատենին առջեւ, կ'ուզէ, որ անոնք, ձայնորդութեան վայրկեաններին, չըսեն թէ Բաֆֆին թեթեւամտօրէն խտացուցեր է գոյները, չըսեն թէ Բաֆֆին, որպէս արեան Մողղքի երկրպագու, Յեղոփոթութեան արուեստի սիրահար, գիտակցարար չափազանցուցեր է իրականութեան մտայն ու արհաւիրքը, որ նա օգային ամբողջներ է կատուցեր եւ սէրվանտէսեան հերոսի պէս շեփորելով, մղեր է ազգը դէպի կորստեան անդունդը... Նա ունի, անշուշտ, այդ ճնշող մտահոգութիւնը եւ կ'ուզէր ցոյց տալ խօսուն, անթխտելի իրողութիւններով, որ հայութեան վիճակը թուրք-քրդական ոչ ժիմի տակ իրօք չափազանց ծանր էր, անհանդուրժելի լինելու չափ, եւ որ «փոթորիկը» պիտի գար — արդէն իսկ ծայր տուեր էր — պիտի գար անկախ անհասաներու կամքէն ու ցանկութիւններէն, պիտի գար անխուսափելիօրէն, տարերային ճակատագրականութեամբ եւ որ ինքը ու իր նըմանները կոչուած են ձեւակերպելու Շարժումը, որոչ սխտածի տակ դնելու, ինչպէս նաեւ հրահրելու, յեղափոխական գիտակցութիւնը, ընդհանրացնելու ազատագրական ձիգը, համադրելու հայ դժնդակ իրականութեան մէջ ծնուելիք զանգուածային դժգոհութեան ու բողոքի ցիրուցան արտայայտութիւնները...

Առանց Մարքսի հատորները կարդացած լինելու, նա գիտէ, որ տնտեսական ազդակը խարխսն է բոլոր մարդկային համայնքներու

մտաւոր ու հոգեկան բարեկեցութեան, որ նա առաջնակարգ մղչն է եւ բոլոր քաղաքական ու ընկերային յեղաշրջումներու. գիտէ, որ ստամոքսի անողոք ճիչը, նիւթական թշուառութեան յուսահատ դալարումները վերջ ի վերջոյ կը լուծուին ըմբոստացումի հօր, օրհասական ազդակի մը մէջ, վերջ ի վերջոյ պիտի յանգին փոթորիկի ու տակնուվրայութեան — ամէնքէ մերժուած, բոլոր օրէնքներէ դուրս նետուած պարիսներու համայնքի մը մէջ, որ սակայն անբան նախիրներու բազմութիւն մը է, բիրտ, պատմագուրկ հորդա մը է — նման շրջապատող շատ մը հորդաներուն, որոնք ճակատագրապաշտ բթամտութեամբ կը համակերպին յաւիտեանօրէն իրենց նախրային կացութեան — այլ առաջադէմ եւ աչքարաց ժողովուրդ մը, քաղաքակրթութեան առողջ սաղմերով օժտուած, դարաւոր պատմութիւն մը ընդգրկող եւ իր արժանապատուութեան հպարտ գիտակցութիւնն ունեցող համայնք մը...

Ահա թէ ինչու «Կայծեր»ի առաջին էջերէն իսկ՝ Բաֆֆին ուժգնօրէն կ'արձագանգէ թուրքահայոց տնտեսական գուլումի աղաղակը, կ'ազդարարէ հայ աշխատաւոր ժողովրդի տընտեսութիւնը հիմքէն հարուածող ու քայքայող անսելի պատուհասը:

Կը խօսի Ֆարհատը «Կայծեր»ի առաջին հատորի ստալին իսկ գլխին մէջ\*):

«Մեր տանը խիստ սակաւ էի տեսնում հօրս... դաշտի մարդ էր: Տարուան երեք երանակներում — գարուն, ամառ եւ աշուն — նա մշակում էր իր հողերը եւ փոքրիկ այգին, իսկ ամերը իր ջուլիակի խորի մէջ կտաւ էր գործում: Բայց դարձեալ մնում էր միշտ ագփառ...»

Լինում էր, շատ անգամ տանը հաց չունէինք ուտելու, էոյրերս լաց էին լինում սովից: Եւ անա՛ գիշերային տարածամ պահուն յայտնուում էին հարկապահանջները: Սկսում էին դուռը զարկել... Ներս էին մտնում մի խումբ կատաղի Ֆէրրաչներ: Բալարովին դժախտ էր դառնում... մեր տունը... Հայրս մեռելի գոյն էր ստանում, իսկ մայրս երկիւղից սկսում էր

\*) էջ 8